ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 464-22
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» 08 2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՌԼԵՆԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն (գրանցման համար 273.110.1197165, ՀՎՀՀ՝ 02847109) (այսուհետ՝ Շահառու), ի դեմս տնօրեն ***Արթուր Կառլենի Սահակյանի*** (նույնականացման քարտ 000177790 տրված 15.11.2012թ., 001-ի կողմից) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով իրականացնել ոռոգման արդիական համակարգերի ներդրման աշխատանքներ, իսկ նախարարությունը պարտավորվում է իրականացված աշխատանքների դիմաց տրամադրել Ծրագրով սահմանված փոխհատուցում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Նախարարությունն** իրավունք ունի.

2.1.1. Պայմանագիրը կնքելուց հետո, ցանկացած ժամանակ իրականացնելու մոնիթորինգ,

2.1.2 Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, դեպքում չընդունելու իրականացված աշխատանքները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.3. Չփոխհատուցել Շահառուի կողմից կատարված ներդրումները, եթե դրանք չեն համապատասխանում Ծրագրի 24-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պայմաններին:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Փոխհատուցման ենթակա գումարը սույն Պայմանագրի կքնումից հետո փոխանցել Շահառուի հաշվեհամարին վերջինիս կողմից Ծրագրով նախատեսված դիմումը և ձեռքբերման և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով նախարարություն ներկայացնելուց հետո:

2.3. Շահառուն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել պարզաբանումներ Ծրագրի դրույթների վերաբերյալ,

2.3.2. Պահանջել փոխհատուցում Նախարարությունից Ծրագրի 24 կետի 15-րդ ենթակետով սահմանված կարգին համապատասխան, եթե կատարել է սույն Պայմանագրի 2.2.1. կետի և Ծրագրի 24-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը:

2.4. Շահառուն պարտավոր է՝

2.4.1. Ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացնել Ծրագրի չափորոշիչներին համապատասխան,

2.4.2. Չխոչընդոտել Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգին,

2.4.3. Նախարարություն ներկայացնել հավաստի տեղեկատվություն և փաստաթղթեր,

2.4.4. Ծրագրի դրույթները խախտելու դեպքում փոխհատուցված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե այդ մասին ծանուցումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի գինը որոշվում է փաստացի կատարված և փոխհատուցման ենթակա ծախսերի հիման վրա և սահմանվում է գրավոր համաձայնությամբ:

3.2. Փոխհատուցման ենթակա գումարը հաշվարկվում է Ծրագրի 24-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված կարգով:

3.3. Նախարարությունը փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է Շահառուին հաշվարկային հաշվին անկանխիկ եղանակով:

4. Մոնիթորինգը

4.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շահառուին տրվում են գրավոր կամ բանավոր ցուցումներ և առաջարկություններ:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շահառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրում (անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայական N 04012022-07-0108) 2 հա հողամասում ներդնել ոռոգման կաթիլային համակարգ իսկ նախարարությունը պարտավորվում է կատարել ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար Շահառուի կողմից կատարված ծախսերի փոխհատուցում Ծրագրի 24-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված չափաքանակով:

5.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր,

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Այլ պայմաններ

9.1. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.2. Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված պահանջներով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
900011040095
ՀՎՀՀ 02698604
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

(ստորագրություն) Կ. Տ.

ՇԱՀԱՌՈՒ

«ԿԱՌԼԵՆԱ ՇԻՆ» ՍՊԸ
տնօրեն
Արթուր Կառլենի Սահակյան
Հասցե՝ ՀՀ ք. Երևան,
Բաղրամյան փող., շ. 70, բն. 8
ն/ք 000177790,
տրվ. 15.11.2012թ., 001-ի կողմից
Հեռ.+374 55 008 811
«ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 20800012938600100

(ստորագրություն)